

ՖԷՆԷՐՊԱՀՃԷ

Ծովի այն խորըն, ուրտեղ փարոսը կը հիւծի,
Մօրիկ կայսրն օր մ'ափերէ ափ տարադիր՝
Դիտեց շիջումն իր արեւուն հըրաչուի,
Փրփրա՛ծ սրտով՝ ամբոխին դէմ զայրալիր:

Կը բողբոջեն երկինքն ու ծով ալեկոծ
Ամէն գիշեր՝ երբ կը մռնչեն ալիքներ.
Ծովուն վըրայ կ'եռայ արիւնն ողբակոծ,
Ու կը շրջին սարսուռ հազած հողիներ:

Դէմ յանդիման անադորոյն ատեանին՝
Արդարադատ երկինք մը կայ վրէժխնդիր.
Վերջալոյսին երբոր ջուրերն արիւնին,
Կայսրը Մօրիկ հոն կ'երեւի թագադիր:

Այդ իր փառքն է եւ յաղթանակն երազին,
Որ դարեր վերջ ալ անթառամ կը ծաղկի
Անմահութեան կնիքն առած իր ճակտին,
Եւ կը յուզէ ջուրեր խորշին Մօտայի:

Անոնք անջինջ կը պահեն շիթն արիւնին,
Ու թաղին պերճ աղամանդները փայլուն,
Եւ զերդ վըկայ պատմութեան այդ վատ էջին՝
Քաղաքին վրայ արիւն արցունք կը հեղուն:

Ամէն գիշեր կը խարչափեն տրամալար,
Հեղաճըկուն ծառեր Ֆէնէր պահճէին,
Եւ սրգաւոր փարոսին լոյսն հեւասպառ
Կը հսկէ հոն՝ խոցելով աչքն ամբոխին:

1954

ԳԻՇԵՐ ՎՈՍՓՈՐԻ ՎՐԱՅ

Գիշեր մը դեղ գիտեցի Չամլըճայի բարձունքէն
Անուրջիդ մէջ գեղեցիկ.
Ըղքեզ, նարօտ զոյդ ափերու ծիծաղկոտ,
Երանդներովդ անդրադարձ:

Կը հեւայիր քաղցրօրէն անդոյրիդ մէջ աննման,
Նայելով միշտ աստղերուն,
Որ ջուրերուդ խորն ինկած աղամանդի պէս պայծառ,
Կ'երգէին սէրդ ափերուն հետ գրկապինդ:

Ոսկեդրուադ նաւու պէս, լուսահեղեղ ու շարժուն,
Կը ծըփայիր կոհակներուդ խայտանքով,
Ո՛վ դու նայեաւ դարաւոր,
Արեւեկան ծովերուն:

Լուսնակն հեւքոտ քեզ կը դիտէր հիացած՝
Ամբիժ ճակտիդ տալով համբոյր մայրական,
Բիւզանդական դարերու
Ողջոյնն ըլլար, կարծես, համբոյրն այն ջերմիկ:

Բայց վէրքերու պէս հոն յանկարծ կ'արիւնէր
Դէմքն ըսպիտակ արծաթափայլ լուսնակին,
Գուցէ անցեալդ արիւնոտ կը յիշէր նէ լալադին,
Ու ցաւն հովին տալով՝ կ'անցնէր տրամօրէն:

1954

Հ. ՄԵՍՐՈՊ ՀԱՆԱՇԵԱՆ